պատկերել։ 1823 թվ. բոլոր մահալներում եղել է հայ 1379, թուրք 2576 ծուխ։ Եթե հաշվելու լինենք հայ ընտանիքը (ծուխը) այն ժամանակ, երբ գերիշխում էին խոշոր գերդաստանները՝ ութ անձից, իսկ թուրք ընտանիքը հինգ անձից բաղկացած, գավառի ամբողջ բնակչության թիվը անմիջական կառավարության հաստատման այդ թվականին ուրեմն հասնելիս է եղել 23912 շնչի, իսկ 1886 թ. մարդահամարով գավառում եղել է 69540, իսկ 1939 թվին 85115 անձ։ Ափսոս՝ որ դժվար է թվական տվյալներ գտնել տարեցտարի դրսի աշխատանքների գնացողների, գոնե ըստ վերցրած անձնագրերի թվի, ինչպես և նոր աշխատանքային վայրերում (Բաքու, Անդրկասպյան երկիր) ընդմիշտ վերաբնակվողների թվի մասին։

Այնուամենայնիվ բնակչության թվի մասին որոշ գաղափար կարող են տալ բերված № 3, 4, 5 աղյուսակները։